ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԳՀՄ · RUEA · PCPA

THE REPUBLICAN UNION
OF EMPLOYERS OF
ARMENIA

թիվ 82
01 օգոստոսի 2012թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար պարոն Ա.Ասատրյանին

Հարգելի պարոն Ասատրյան

Ի պատասխան Ձեր 04.07.2012թ. թիվ ԱԱ/ԹԱ-3-1/4813-12 գրության ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Զբաղվածության 2013-2018թթ ռազմավարություն նախագծի վերաբերյալ մեր առաջարկությունները:
Կից երկու էջ:

Հարգանքով.

Նախագահ՝

Գ. Մակարյան

ՀՀ ք. Երևան, 0010, Մ. Խորենացի 26ա
Հեռ.՝ (+374 10) 52 74 21, ֆաքս (+374 10) 52 44 72
Էլ. փոստ՝ rueamail@gmail.com
Վեբ-կայք: www.employers.am

26a M. Khorenaci street, Yerevan, 0010, Armenia
Tel.: (+374 10) 52 74 21, Fax: (+374 10) 52 44 72
E-mail: rueamail@gmail.com
Web-site: www.employers.am

## Առաջարկություններ և առարկություններ Հայաստանի Հանրապետության Զբաղվածության 2013-2018թթ ռազմավարություն վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Զբաղվածության 2013-2018թթ ռազմավարություն նախագծի վերաբերյալ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը գտնում է, որ զբաղվածության ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ նախարարությունը կատարել է լուրջ վերլուծություն, որը ներառում է տնտեսության համարյա բոլոր ճյուղերը և համադրել է վերլուծական շատ կարևոր տեղեկություններ ըստ ուղղությունների և ժամանակահատվածների: Ռազմավարության նախագիծը էականորեն տարբերվում է մինչ այս ներկայացրած տարբերակից, այն վերանայվել և մեր կողմից ներկայացրած առաջարկները ըստ էության տեղ են գտել ներկայացված ռազմավարությունում: Միաժամանակ ռազմավարության ամրագրված գաղափարները ավելի ռեալ և իրատեսական դարձնելու առումով անհրաժեշտ է որ ռազմավարության առանձին կետեր լրամշակվեն կամ փոփոխվեն և համապատասխանեցվեն ռազմավարության գաղափարախոսությանը.

### Այսպես՝

1. **3.3. Զբաղվածության պետական կարգավորում**

Բաժնի 81-րդ կետի 3-րդ պարբերության ԱՄԿ թիվ 181 Կոնվենցիայի կիրարկման հետ կապված առաջարկում ենք՝ հաշվի առնելով երկրի սոցիալ տնտեսական իրավիճակը, սահմանել ժամանակացույց թէ Կոնվենցիայի որ դրույթը (նորմը) որ ժամանակահատվածից (ռազմավարությունը ընդունելուց հետո մեկ տարի կամ երկու տարի և այլն) պետք է գործի Հայաստանի Հանրապետությունում: Այս բաժնում ներառել նաև «1.2. Տնտեսական քաղաքականություն և բարեփոխումներ» բաժնի օրինակ «վարկի հասանելիության, հարկային վարչարարության կատարելագործման կարգավորման մեխանիզմներ,» արդյունավետ կարգավորման մեխանիզմներ, առավել ուշադրություն դարձնելով նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում ամրագրված ուսումնասիրության կատարման ընթացակարգերի կարգավորմանը, որը դուրս է մնացել տեսչական բարեփոխումների շրջանակից և որը իր բնույթով չի տարբերվում ստուգումների ընթացակարգերից:

2. **3.4. Սոցիալական գործընկերություն**

Բաժնի 87-րդ կետում սոցիալ-աշխատանքային բառերը փոխարինել սոցիալ տնտեսական բառերով, քանի որ զբաղվածության ռազմավարությունը խնդիր է դնում կարգավորել արդյունավետ զբաղվածության քաղաքականություն այլ ոչ թե աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման քաղաքականություն: Այս

բաժնում անհրաժեշտ է հստակեցնել զբաղվածության կարգավորման ոլորտում գործարարության դերը սոցիալ-տնտեսական իրավահարաբերությունների կարգավորման մասով: Մասնավորապես ՀԳՀՄ-ի որպես սոցիալական գործընկեր կազմակերպության դերակատարումը պետության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

Հարկ ենք համարում նշել, որ առանց տնտեսական զարգացումների հնարավոր չէ իրականացնել արդյունավետ զբաղվածության քաղաքականություն, որը ամրագրված է ռազմավարության 4.1. բաժնի 92-95 կետերում և որը նվիրված է զբաղվածության քաղաքականության նոր մոդելին և ակնկալվող արդյունքներին:

### 3. "Զբաղվածության ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի"

Տնտեսություն- աշխատաշուկա համապատասխանության ապահովում բաժնի 1 կետի պատասխանատու կատարող ցանկում ավելացնել Հայաստանի գործատուների հանրապետական միություն բառերը.

Ժողովրդագրական, միգրացիոն և տարածքային հավասարակշռված զարգացման խթանում բաժնի պատասխանատու կատարող ցանկում ավելացնել սոցիալական գործընկերներ բառերը.

Աշխատաշուկայի պետական կարգավորման նոր մոդելի կարգավորում բաժնի 1 և 2 կետերի պատասխանատու կատարող ցանկում ավելացնել Հայաստանի գործատուների հանրապետական միություն բառերը: